

# Տեղեկատվական վեճերի խորհուրդ

## Փորձագիտական եզրակացություն

*«Հայաստանի ավետարանական հավատքի քրիստոնյաների «Կյանքի խոսք» եկեղեցի» կրոնական կազմակերպության» փաստաբանը դիմել է Տեղեկատվական վեճերի խորհրդին՝ խնդրելով կարծիք հայտնել «Իրավունք հետաքննություն» և «Արգումենտի նեղելի վ Արմենիի» շաբաթաթերթերի դեմ 18.11.2011թ.-ին ներկայացրած հայցապահանջի հիմքերի վերաբերյալ: Հայցապահանջով հարուցված քաղաքացիական գործը քննվում է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում: Ներկայումս դատական քննությունը գտնվում է նախապատրաստական փուլում:*

### 1. Փաստերը

*«Իրավունք հետաքննություն» շաբաթաթերթի թիվ 39(2031) 19-25 հոկտեմբեր 2011 թվականի համարի 1-ին էջի կենտրոնում հրապարակվել է «Աղանդախառն պոռնոլուսանկարների թեման «ծաղկեց» մանկապղծության մեղադրանքով» վերնագրով հոդված, որի վերաբերելի հատվածը հետևյալն է.*

*«Սենսացիոն բացահայտումներ», «բացառիկ հարցազրույցներ» և նմանատիպ «գայթակղիչ» այլ վերտառություններով են ողողված այսօրվա որոշ լրատվամիջոցները՝ դերասանուհի Անժելա Մարգարյանի, նրա «տղամարդու» և այդ երկու անձանց ընտանիքի անդամների փոխհարաբերությունները հանրության առարկա դարձնելու գործընթացում: Անշուշտ, մենք առհասարակ չէինք անդրադառնա հայկական շոու-բիզնեսին այդքան բնորոշ անառակաբարո վարքագծի և, մասնավորապես, զազրելի պոռնոկադրերի թեմային, եթե չլիներ երկու հանգամանք: Առաջինը որ պոռնոսկանդալի «հերոսուհի» Անժելա Մարգարյանը պատկանում է Հայաստանի խոշորագույն աղանդին՝ «Կյանքի խոսքին», որին պատկանում են նաև շոու-բիզնեսի շատ ներկայացուցիչներ, և ավելին՝ այդ պատկանելությունը հաճախ նրանց առաջխաղացման նախապայմաններից մեկն է: Եվ երկրորդ ու ամենակարևորը՝ քր. գործով կալանավորված անձի մայրը՝ Մարինա Արայանը, հրապարակավ մեղադրել է աղանդավոր-տաղանդավոր դերասանուհուն սեփական զավակի նկատմամբ անառակաբարո գործողությունների մեջ... Համացանցի լեզվով ասած՝ այս թեման ունի «թեգերի» (բանալի բառերի) ահավոր համակցություն՝ «աղանդ, ինցեստի – մանկապղծության մեղադրանք...»: Այսինքն, ենթադրվում է հանրորեն չափազանց վտանգավոր երևույթ...»:*

Հողվածի վերևում գետեղված է համակարգչային եղանակով մոտնաժված լուսանկար, որում պատկերված է վանականի հագուստով տղամարդ, հագուստի վրա նշված է «Կյանքի խոսք» գրառումը: Վանականի հագուստով տղամարդու հետևում պատկերված է մեկ այլ տղամարդու լուսանկար, իսկ նրա դիմացը պատկերված է անպարկեշտ հագուստներով ծնկաչոք կին: Նշված երեք անձանց լուսանկարները մոտնաժված են այնպես, որ դիտողի մոտ տպավորություն է ստեղծվում, թե վանականը դիմում է տղամարդուն հետևյալ բառերով. «- Ծո՛ւ, Խազար, ասիգա մեր Անժելն է: Հրեշտակին անառակ մի ըսեր, մեղք է»: Նշված արտահայտության տակ, որպես աղբյուրի վկայակոչում, գրված է. «Աղանդաավետարան՝ ըստ Արթուր Միմոնյանի»: Լուսանկարի վերևի աջ անկյունում մեծ տառերով գրված է. «Կտոր մե Կյանքի խոսք»:

Հողվածի շարունակությունը տպագրված է 4-րդ էջում, որտեղ էջի աջ անկյունում հողվածին զուգահեռ պատկերված է մոտնաժված լուսանկար, որում պատկերված է միանձնուհու հագուստով կին, ում ձեռքին առկա է վահանակ՝ «Կյանքի խոսք» գրառումով: Լուսանկարին զուգահեռ գետեղված է նույն վերնագրով հողված: Հողվածը բաժանված է մի քանի ենթավերնագրերի, որոնցից մեկը, որը հանդիսանում է վեճի առարկա, վերնագրված է «Աղանդները անձեռնմխելի՞ են», որում նշված է հետևյալը.

*«Կյանքի խոսք» աղանդավորական միավորումը հայ հասարակության մեջ տպավորված է որպես մի կազմակերպություն, որի թաքուն կամ բացահայտ ազդեցությունը տարածվում է նաև որոշ հեռուստաընկերությունների և իշխանական օղակների վրա: Թե որքանով է դա համապատասխանում իրականությանը, հավանաբար կպարզվի նաև Կարեն Արայանի քրեական գործի վարույթի առկա և հետագա «նրբերանգներով»: Այս պահին կարելի է առնվազն փաստել, որ Կարենի մայրը ահաբեկված է լրջագույնս: Ահա, նրա խոստովանությունը. «Շատ եմ տանջվում հիմա, որ չէի հավատում տղայիս, շատ եմ վիճել իր հետ: Բայց ինքն ինձ ասում էր՝ մամա, ինքն ինձ սպառնում է, գլուխ է գովում, որ ինքն ու ամուսինը մեծ օղակներում ունեն ինչ-որ լավ հովանավորներ, սպառնում էր, որ իր մեջքին կանգնած է ամենաուժող, ամենահզոր եկեղեցին է կարծես «Կյանքի խոսք», այդպես էր ասում: Եվ, որ ինքն այնտեղ շատ լավ դիրքերում է, անգամ, որ իր քույրն այնտեղ ավագ է: Ես միշտ հարցնում էի՝ «Ի՞նչ ունես դու վախենալու, ինչի՞ց ես վախենում, թող իր քույրը լինի ավագ, թող լինի ինքը «Կյանքի խոսքում», թող վերին օղակներում ունենա հովանավորներ, ի՞նչ ունես արած, որ վախենում ես: Ասում էր, ես ոչինչ արած չունեմ, բայց իր կողմից ամեն ինչ սպասում եմ, որովհետև նա շատ վտանգավոր մարդ է»:*

Հանրությանը հուզում է նաև մեկ այլ հարց. Հանդիսանում է արդյոք Անժելյան «Կյանքի խոսքի» անդամ վերջին բացահայտումներից հետո: Եթե՝ այո, ապա պարզ է դառնում, թե որ «աստվածներին» նկատի ունեն դերասանուհի Անժելա Սարգսյանը՝ «խոստովանելով» «Կովախնձորին», թե հաճախ է աղոթում...»

Նշված երկու լուսանկարները տպագրվել են նաև ՀՀ-ում ռուսերեն լեզվով լույս տեսնող «Արգունենտի նեդելի վ Արմեննիի» շաբաթաթերթի 25-31 հոկտեմբերի 2011 թվականի թիվ 41(282) համարի 1-ին և 4-րդ էջերում: 4-րդ էջում տպագրված է նաև հոդված «Сенсация» - палка о двух концах: история с сектантством и порнухой»: Նույն էջի ենթաթեմաներում տպագրված է «Непрекосновенны ли сектанты?» վերնագրով հոդված, որում նշված է.

*«Сектанское объединение «Слово жизни» в сознании общественности представляется как довольно мощная организация. Во всяком случае, Марина Араян сообщила прессе, что ей сын серьезно опасался Анжелы именно потому, что актриса была членом этой секты. Это, конечно, ее личное дело и, возможно, ее личные проблемы. С другой стороны, понятен интерес общественности к тому обстоятельству, как сама секта относится Анжеле после публикации компрометирующих ее порноматериалов... В телецикле «Яблоко раздора» Анжела заверила телеведущих и общественность в том, что она часто молится. В том случае, если актриса продолжает оставаться членом секты «Слово жизни», можно предположить, какие ценности проповедует секта и каким богам молится Анжела»:*

Հայցվորները՝ «Կյանքի խոսք» կրոնական կազմակերպությունը և կազմակերպության ղեկավար Արթուր Միմոնյանը իրենց հայցապահանջում պնդում են հետևյալը.

«Իրավունք հետաքննություն» շաբաթաթերթում հրապարակված լրատվական նյութի առնչությամբ հայցվորները գտնում են, որ

վիրավորական են.

- 1-ին և 4-րդ էջերում պատկերված մոտնաժված լուսանկարները: Հայցվորները պնդում են, որ լուսանկարներում պատկերելով դերասանուհի Անժելա Սարգսյանին թերթը փորձել է նրա անձի հետ կապված հանրային հետաքրքրության ներկայացող դեպքերը կապել կրոնական կազմակերպության գաղափարախոսության հետ, մասնավորապես, փորձ է արվել ստեղծել տպավորություն, թե կրոնական կազմակերպությունը և նրա ղեկավարը ջատագովում են անառակաբար ապրելակերպ և վարքագիծ,
- լուսանկարում պատկերված «Աղանդաավետարան ըստ Արթուր Միմոնյանի» արտահայտությունը,
- «աղանդ» բառի հասցեագրումը կրոնական կազմակերպությանը հոդվածների տարբեր մասերում: Կազմակերպությունը պնդում է, որ «Կյանքի խոսք» կրոնական կազմակերպությունը աղանդ չէ, այլ ճշմարիտ քրիստոնեական դավանություն քարոզող, օրենքով սահմանված կարգով գրանցված կրոնական կազմակերպություն,
- «Աղանդախառն պոռնոլուսանկարների թեման «Ժողկեց» մանկապղծության մեղադրանքով» վերնագիրը, քանի որ ընթերցողների մոտ տպավորություն է

ստեղծվում, թե կրոնական կազմակերպությունը քարոզում է պոռնոգրաֆիա և հովանավորում է պոռնոգրաֆիկ նյութերի տարածումը, մանկապղծության հրահրումը ու հովանավորչությունը,

- «աղանդավոր-տաղանդավոր դերասանուհի» հեզնական արտահայտությունը,
- «*համացանցի լեզվով ասած՝ այս թեման ունի «թեզերի»...ահավոր համակցություն՝ «աղանդ, ինցեստի և մանկապղծության մեղադրանք...»* արտահայտությունը, քանի որ ակնարկվում է, թե կազմակերպությունը հովանավորում է քրեորեն արգելված արարքներ ինչպիսին է մանկապղծությունը,

զրպարտող են

- Կրոնական կազմակերպությանը աղանդավորական կրոնական միության վերագրելը,
- հայտարարությունը, որ դերասանուհի Անժելա Սարգսյանը հանդիսանում է կազմակերպության անդամ,
- հայտարարությունը, որ կրոնական կազմակերպությունը հովանավորում է մանկապղծությունը և ինցեստը,
- հայտարարությունը այն մասին, որ կազմակերպությունը իրականացնում է քողարկված գործունեություն և ունի լայն կապեր ազդեցիկ շրջանակների՝ այդ թվում նաև հեռուստաընկերությունների հետ:

«Արգումենտի նեդելի վ Արմենիի» շաբաթաթերթում հրապարակված լրատվական նյութի առնչությամբ հայցվորները գտնում են, որ

վիրավորական են.

- տպագրված լուսանկարները՝ նույն հիմքերով, ինչ «Իրավունք հետաքննություն» շաբաթաթերթում հրապարակված լուսանկարները,
- հոդվածի վերնագրումը «история с сектатнтством и порнухой» արտահայտությամբ, որով ընթերցողի մոտ տպավորություն է ստեղծվում, թե կրոնական կազմակերպությունը և նրա գործունեությունը կապ ունեն պոռնոգրաֆիայի հետ,
- աղանդ բառի հասցեագրումը կազմակերպությանը հոդվածի բոլոր դրույթներում, որն ինքնին վիրավորական իմաստ ունի,
- երկրորդ լուսանկարում կնոջ ձեռքին պահած վահանակի հետևյալ արտահայտությունը. «Կյանքի խոսք Слово жизни» արտահայտությունը, որով կարծիք է կազմվում, թե կազմակերպության անդամները դրսևորում են նույն վարքագիծը, ինչ լուսանկարում պատկերված կնոջ մասին տարածվել է տեղեկատվություն լրատվական միջոցներով, որոնք առաջացրել են հանրային հետաքրքրություն,

- «Կովախնձոր» հեռուստաշարին Անժելան վստահեցնում էր հեռուստահաղորդավարներին և հասարակությանը, որ նա հաճախ է աղոտում: Այն դեպքում, երբ դերասանուհին շարունակում է մնալ «Կյանքի խոսք» աղանդի անդամ, կարելի է ենթադրել, թե ինչ արժեքներ է քարոզում աղանդը» հայտարարության համար, քանի որ նշվում է, թե եկեղեցին շեղվել է ճշմարիտ աստվածապաշտությունից ու իր առաքելությունից՝ հավանություն տալով դերասանուհու լրատվամիջոցի բնորոշմամբ գազրելի վարքագծին,

գրպարտող են.

- Վերը նշված վերնագիրը, քանի որ դրանով արվում է փաստի մասին հայտարարություն առ այն, որ կրոնական կազմակերպությունը իր դավանանքով և գործունեությամբ քարոզում է հակաբարոյական արժեքներ՝ պոռնոգրաֆիա, ինչպես նաև պոռնոգրաֆիկ նյութերի տարածում, մանկապղծության հրահրում և նման արարքների հովանավորչություն,
- Հայտարարությունները այն մասին, թե դերասանուհին կրոնական կազմակերպության անդամ է,
- «Կովախնձոր» հեռուստաշարին Անժելան վստահեցնում էր հեռուստահաղորդավարներին և հասարակությանը, որ նա հաճախ է աղոտում: Այն դեպքում, երբ դերասանուհին շարունակում է մնալ «Կյանքի խոսք» աղանդի անդամ, կարելի է ենթադրել, թե ինչ արժեքներ է քարոզում աղանդը» հայտարարությունը, որի հիման վրա հողվածում կատարվում է փաստի մասին հայտարարություն, թե նա համարվում է այդ կազմակերպության անդամ, մինչդեռ այդ հաղորդաշարի ժամանակ դերասանուհին կամ մյուս մասնակիցները ընդհանապես չեն արտաբերել Կյանքի խոսք բառակապակցությունը: Հետևաբար, լրատվամիջոցը անբարեխիղճ կերպով է վերարտադրել տեղեկությունը:

Երկու լրատվամիջոցների դեմ ուղղված հայցապահանջում հայցվորները ներկայացրել են նմանատիպ պնդումներ ոչ միայն իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպության, այլ նաև կազմակերպության ղեկավար Արթուր Միմոնյանի՝ որպես ֆիզիկական անձի դեմ ուղղված վիրավորական և գրպարտող բնույթի հայտարարությունների հիմքով՝ և՛ լուսանկարների, և՛ հողվածների առումով:

Վերը նշվածի հիմքով հայցվորները դատարանից խնդրել են վիրավորանքի հիմքով պարտավորեցնել լրատվամիջոցներին հրապարակավ ներողություն խնդրել և հրապարակել վճիռը իսկ գրպարտության հիմքով հրապարակել հերքում, ինչպես նաև որպես փոխհատուցում պատասխանողներից գանձել 36000 ՀՀ դրամ՝ 4000 դրամ պետական տուրքի և 32000 թարգմանության և նոտարական ծախսերի դիմաց:

### **3. Ներպետական և միջազգային իրավունքի համապատասխան աղբյուրները**

Խորհուրդն առաջնորդվել է ՀՀ Սահմանադրության 27-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ Սահմանադրական դատարանի 2011թ. նոյեմբերի 15-ին կայացրած որոշմամբ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 9-րդ, 10-րդ և 14-րդ հոդվածներով, կոնվենցիայի թիվ 12-րդ Արձանագրության 1-ին հոդվածով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի և Ջանգվածային լրատվության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի դրույթներով: Խորհուրդը որպես ուղեցույց հաշվի է առնել նաև ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ R(97)20 Հանձնարարականը Ատելություն սերմանող խոսքի մասին, ինչպես նաև Վենետիկի հանձնաժողովի թիվ CDL-AD(2008)026 փաստաթուղթը արտահայտվելու ազատության և կրոնի ազատության հարաբերակցության մասին:<sup>1</sup>

#### 4. Վիճարկվող գործի իրավական վերլուծությունը

Փաստերը գնահատելիս Խորհուրդը առաջնորդվել է հետևյալ սկզբունքներով.

- Ժողովրդավարական հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է հնարավորություն ունենա խաղաղ կերպով արտահայտելու իր գաղափարները այլ հավատքների, համոզմունքների կամ դոգմաների մասին՝ անկախ այդ գաղափարների բացասականության աստիճանից:
- Յուրաքանչյուր դեպքում ազատ արտահայտվելու իրավունքը սահմանափակելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրա նպատակն է հատուկ համոզմունքներ ու կարծիք ունեցող անձանց պաշտպանելը, այլ ոչ թե համոզմունքային համակարգերի պաշտպանությունը՝ քննադատությունից: Արտահայտվելու ազատության իրավունքից բխում է, որ անհրաժեշտ է հնարավորություն տալ, որպեսզի քննարկվեն, բաց բանավեճի առարկա հանդիսանան, նույնիսկ կոշտ ու անողջամիտ քննադատության ենթարկվեն համոզմունքային համակարգերը, կարծիքները և հաստատությունները՝ քանի դեռ նման քննադատությունը չի վերաճում անհատի կամ անհատների խմբերին ողոված ատելություն հրահրող խոսքի:
- ատելություն հրահրող խոսքի որոշ տեսակներ կարող են այն աստիճանի վիրավորել անհատներին կամ անհատների խմբերին, որ դուրս մղվեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված խոսքի այլ տեսակների համար սահմանված պաշտպանության շրջանակներից: Սա տեղի է ունենում այն

---

<sup>1</sup> Փաստաթղթի ամբողջական անվանումն է. \$Արտահայտվելու ազատության և կրոնի ազատության մասին զեկույց. Աստվածանարգության, կրոնական վիրավորանքի և կրոնական ատելության հրահրման հարցերի կարգավորման և քրեական հետապնդման մասին՝: Վենետիկի հանձնաժողով. Իրավունքի միջոցով հանուն ժողովրդավարության Եվրոպական հանձնաժողով: 23 հոկտեմբեր 2008, CDL-AD(2008)026, ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի 76-րդ նիստում (17-18 հոկտեմբեր 2008):

դեպքում, երբ ասելություն սերմանող խոսքը ուղղված է Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով:

- Հավատացյալների կրոնական զգացմունքների նկատմամբ հարգանքը կարելի է իրավամբ խախտված համարել այն դեպքում, երբ կրոնական պաշտամունքի առարկա հանդիսացող իրերը պատկերվում են պրովոկացիոն տեսքով կամ երբ կրոնական սկզբունքները և դոգմաները ենթարկվում են հարձակումների. նման արարքները կարող են որոշ հանգամանքների ներքո համարվել որպես հանդուրժողականության ոգու, որը նույնպես պետք է հանդիսանա ժողովրդավարական հասարակության հատկանիշ, չարամիտ խախտում:
- Բազմակարծությունը, հանդուրժողականությունը և լայնախոհությունը հանդիսանում են ժողովրդավարական հասարակության փորձադրոշմը: Նրանք, ովքեր օգտվում են իրենց կրոնը քարոզելու ազատությունից, անկախ այն հանգամանքից, թե դա անում են որպես կրոնական մեծամասնության թե փոքրամասնության անդամ, չեն կարող ողջամտորեն ակնկալել, որ պետք է զերծ մնան քննադատությունից: Նրանք պետք է հանդուրժեն և ընդունեն, որ այլ անձինք կարող են մերժել իրենց կրոնական համոզմունքները և նույնիսկ քարոզել այնպիսի ուսմունքներ, որոնք թշնամական են իրենց հավատքին:

Առաջնորդվելով նշված սկզբունքներով, Խորհուրդը գալիս է հետևյալ եզրահանգմանը.

1. Խնդրո առարկա վեճը շոշափում է մի կողմից լրատվամիջոցների ազատ արտահայտվելու իրավունքը և մյուս կողմից քաղաքացիների մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը:
2. Նախ, Խորհուրդը հարկ է համարում անդրադառնալ հայցվորների պնդումներին վիճահարույց հողվածներում «ադանդ» բառի գործածության վերաբերյալ: «Ադանդ» բառը նույնիսկ իր սովորական, առօրյա գործածական իմաստով կարող է անհանգստություն պատճառել, ցնցել և այդ իմաստով անընդունելի համարվել կրոնական որոշ խմբերի համար: Այդուհանդերձ, այդ հանգամանքը դեռ բավարար չէ պնդելու համար, որ լրատվամիջոցներն անցել են թույլատրելի քննադատության շրջանակները՝ ըստ ժամանակակից ժողովրդավարական սկզբունքների: Բացի այն, որ արտահայտվելու ազատության իրավունքը պաշտպանում է նույնիսկ անհանգստություն պատճառող և սադրող խոսքը, ժողովրդավարական սկզբունքները հնարավորություն են տալիս, որպեսզի արտահայտվելու ազատությունը օգտագործվի որպես **միջոց** այլոց կրոնական հայացքների, համոզմունքների և նույնիսկ կրոնական հաստատությունների նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնելու, դրանք բաց բանավեճի առարկա դարձնելու և նույնիսկ կոշտ քննադատության ենթարկելու համար՝ **պայմանով**,

**որպեսզի հանրային դիսկուրսի իրականացման նման եղանակը չվերածվի կրոնական ատելության հրահրման:** Հետևաբար, քննության առարկա պետք է հանդիսանա ոչ թե «աղանդ» բառի որևէ *a priori* սահմանումը, այլ **համատեքստը**, որի շրջանակներում բառն օգտագործվել է: Եթե համատեքստը թշնամություն կամ ատելություն սերմանող է, ապա նույնիսկ չեզոք իմաստային նշանակություն ունեցող բառը կարող է խնդիրներ առաջացնել: Այս իմաստով Խորհուրդը գտնում է, որ թեև «աղանդ» բառն ինքնին արատավորող իմաստ չի պարունակում, սակայն դրա շարունակական և շեշտադրված օգտագործումը երկու հոդվածների ընդհանուր համատեքստի լույսի ներքո խնդրահարույց է:<sup>2</sup>

3. Խորհուրդը նկատում է, որ վիճահարույց հոդվածները մեծամասամբ վերաբերում են պոռոնոգրաֆիկ բնույթի նյութերի տարածման հիմքով հարուցված քրեական գործին, որի փաստերը և որում ընդգրկված անձինք առաջացրել են հանրային մեծ հետաքրքրություն և այդ հիմքով տևական ժամանակ է, որ ծավալվել են հանրային բաց քննարկումներ: Ի սկզբանե որպես քննադատության թիրախ ընտրելով այս սկանդալային իրադարձությունների հեղինակներին՝ ֆիզիկական անձանց, հոդվածագիրները անսպասելիորեն անդրադարձ են կատարել և քննադատության թիրախ դարձրել նաև «*Հայաստանի ավետարանական հավատքի քրիստոնյաների «Կյանքի խոսք» եկեղեցի կրոնական կազմակերպությանը*»՝ այն պատճառաբանությամբ, որ սկանդալային պատմության մեջ ներգրավված առանցքային անձը հանդիսանում է նշված կրոնական կազմակերպության անդամ: Այս կազմակերպության մասին տեղեկությունները, անկախ սույն գործի հանգամանքներից և դատելով հանրային կյանքի տարբեր ոլորտներում ծավալվող քննարկումներից և տարբեր աղբյուրներից դուրս հորդող կարծիքներից, ներկայացնում է հասարակական մեծ հետաքրքրություն: Հետևաբար, սկզբունքորեն և անկախ վիճահարույց հոդվածների բովանդակությունից, տեղեկատվական նյութի տարածումով լրատվամիջոցներն իրականացրել են իրենց առաքելությունը, որն համահունչ է ժողովրդավարական հասարակարգում մամուլի դերի հետ:
4. Սակայն իրենց առաքելությունն իրականացնելիս լրատվամիջոցները դուրս են եկել պատասխանատու լրագրության շրջանակներից: Հարցը դիտելով պատասխանատու լրագրության սկզբունքի տեսանկյունից, Խորհուրդը գտնում է, որ հոդվածներում հնչեցված փաստացի հայտարարությունները և կարծիքները այն մասին, թե սկանդալային պատմության կիզակետում հայտնված դերասանուհին հանդիսանում էր կրոնական կազմակերպության անդամ, թե ոչ, երկրորդական նշանակություն ունի: Առաջնային նշանակություն ունի, կրկին պատասխանատու լրագրության տեսանկյունից, թե արդյոք արդարացված էին կրոնական կազմակերպության՝ գաղափարախոսության և համոզմունքների մասին հնչեցված սուր կարծիքները՝

---

<sup>2</sup> Տե՛ս եզրահանգման վերջում:



առանց նման կարծիքները հիմնավորող որոշ փաստական հիմքերի: Խորհրդի այս մոտեցումը բխում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներից: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրական դատարանը իր թիվ 997 որոշման հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

*«Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով պաշտպանվում է բացասական կարծիքի արտահայտումը՝ այնքանով, որքանով այն հիմնված է հաստատված կամ ընդունված փաստերի վրա և արված է արդար մտադրություններով... արտահայտությունը չի կարող որպես վիրավորանք որակվել, եթե այն ունի որոշակի<sup>3</sup> փաստական հիմք: Այսինքն, ոչ թե պետք է վիրավորանք համարել գնահատողական դատողությունը, այլ անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունը: Այստեղ կարևոր է նաև «արատավորելու նպատակով» արտահայտության իրավական իմաստի ճիշտ ընկալումը: Տվյալ համատեքստում այն ենթադրում է դիտավորություն, կանխամտածված գործողություն, ոտնձգություն անձի արժանապատվության նկատմամբ: Մինչդեռ գնահատողական դատողությունը փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում արվող հետևություն է, ինչը լրագրողի ոչ միայն իրավունքը, այլև՝ պարտականությունն է:*

Այսպիսով, ցանկացած գնահատողական դատողության և կարծիքի հիմքում պետք է ընկած լինեն որոշակի (այլ ոչ թե ճշգրիտ) փաստական հիմքեր: Նման փաստական հիմքերի բացակայությունը արտահայտված կարծիքը կամ գնահատող դատողությունը դարձնում է անիրավաչափ: Ընդ որում, որևիցե օրենք կամ իրավական ակտ չի կարող ճշգրտորեն սահմանել «որոշակի» եզրույթի շրջանակները: Այդ շրջանակները ավելի շուտ որոշվում են «պատասխանատու լրագրություն», «բարեխիղճ լրագրություն», «լրագրողական էթիկա» հասկացությունների ներքո: Այսինքն, սույն դատական վեճը մասամբ գտնվում է նաև լրագրողական էթիկայի հարթության վրա:

5. Հոդվածների բովանդակությունից չի բխում, որ լրատվամիջոցները կրոնական կազմակերպության գործունեության և նրա կողմից քարոզվող գաղափարների վերաբերյալ իրենց գնահատականները, կարծիքները և դատողությունները արտահայտելիս իրենց տրամադրության տակ ունեցել են նույնիսկ նվազագույն փաստական տվյալներ, որոնք ցանկացած օբյեկտիվ դիտորդի և անշահախնդիր երրորդ անձի հիմք կտային կարծիք կազմելու, որ այդ գնահատականները և

---

<sup>3</sup> Ընդգծումը մերն է:

կարծիքները վերագրելի էին կազմակերպությանը: «Չի կարող հայցել հեղինակություն այն անձը, ով չունի նման հեղինակություն» հայտնի կարգախոսը վերաբերում է այն դեպքերին, երբ անձը կամ կազմակերպությունը իր կոնկրետ արարքով, գործողություններով կամ վարքագծով իր վրա է հրավիրել հանրության համակ ուշադրությունը և քննադատությունը: Նման հանգամանքներում նույնիսկ սադրող բնույթի քննադատությունը պաշտպանված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով և Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի դրույթներով: Մինչդեռ տվյալ դեպքում հոդվածագիրները չեն կատարել իրենց սեփական քննությունը կրոնական կազմակերպության կողմից քարոզվող գաղափարների և համոզմունքների մասին, այլ դրա փոխարեն, հիմնվելով մեկ փաստական տվյալի, այն է՝ երրորդ անձի հայտարարության վրա, դրանից բխեցրել են ընդհանուր բնույթի վերացական մի շարք եզրահանգումներ և դատողություններ: Նման հանգամանքներում, երբ բացակայում են փաստական հանգամանքները, առաջին պլան է մղվում Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը այն մասին, որ փաստական տվյալների բացակայության պայմաններում առերևույթ է դառնում արժանապատվությունը արատավորելու **դիտավորության** առկայությունը: Իսկ այս չափորոշիչի առկայությունը էական է հայտարարությունը վիրավորական կամ զրպարտող բնույթի համարելու համար:

6. Նույն լույսի ներքո է Խորհուրդը գնահատում նաև հոդվածներին ուղեկցող լուսանկարները, որոնք տվյալ դեպքում ներկայացվել են որպես ծաղրանկարներ: Ծաղրանկաները հանդիսանում են ազատ արտահայտվելու առանձնահատուկ եղանակներից մեկը և որպես այդպիսին գտնվում են ազատ խոսքի պաշտպանության տակ, սակայն հոդվածների բովանդակային մասում փաստական տվյալների բացակայությունը առարկայազուրկ էր դարձնում կազմակերպության ատրիբուտների և նրա ղեկավարի պրովոկացիոն տեսքով պատկերումը ծաղրանկարներում: Արդյունքում, ծաղրանկարների մատուցման նման եղանակը կարող էր վիրավորել կրոնական կազմակերպության անդամների կրոնական զգացմունքները:

#### **Եզրահանգում**

7. Հաշվի առնելով, որ կրոնական կազմակերպության հասցեին ուղղված դատողությունները զուրկ էին փաստական հիմքերից, նման պայմաններում հնարավոր չէ վիճահարույց արտահայտությունները որակել որպես բարեխիղճ դատողություններ (fair comment): Ավելին, հոդվածի ընդհանուր համատեքստը և դրանում նաև աղանդ բառի շարունակաբար և հետևողականորեն օգտագործումը լրատվանյութը վերածում է կրոնական ատելություն սերմանող կամ հրահրող խոսքի:

8. Խորհուրդը գտնում է, որ գործի փաստերը միանգամայն հնարավորություն են տալիս սույն վեճը լուծել արտադատական իրավակարգավորման եղանակներով և կողմերին կոչ է անում օգտվել այդ հնարավորությունից:

### **Տեղեկատվական վեճերի խորհուրդ**

idcarmenia@gmail.com

**Շուշան Դոդոյան (Խորհրդի քարտուղար)** - Տեղեկատվության ազատության կենտրոնի նախագահ

**Բորիս Նավասարդյան** - Երեւանի մամուլի ակումբի նախագահ

**Արամ Աբրահամյան** - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

**Արա Ղազարյան** - «Արնի Քնսալթ» փաստաբանական գրասենյակի փոխտնօրեն

**Մանանա Ասլամազյան** - «Արմմեդիա» ծրագրի տնօրեն